

ի Հոռմ (Գիււ. Անտ.), թէ Գաղղիոյ եւ Նափոյի գետաբաններուն տուած վկայականներուն մէջ գրուած է՝ եւ վասն բռնադատելոյ հասարակութիւնն առ ի յառնել Պատրիարք, եւ զընդունելոյս: Յետոյ Պրուսայու առաջնորդ Սամուէլ Եպ. ին առաջարկեց, որ նոյնպէս մերժեց, ինչպէս վերն յիշեցինք: Վերջապէս 13 Մայիս 1764ին ժողովին մէջ ինքն ալ պատգարակի վրայ գտնուելով՝ բռնի հաւանեցուցին Երուսաղեմի Էփէլ Գրիգոր Վ. Պատմաձեանը պատրիարքութիւնը յանձն առնլու:

Յամին 1764, Յուլիսի 19ին, Վարդավառի երկրորդ օրն Բշ. իրիկուն ժամը 12ին Յակոբ Պատրիարք մաշարայական ախտիւ փոխեցաւ յաստեացս: Յաջորդ օրն՝ ժամը 3ին մարմինը փոխադրուեցաւ հանդիսիւ Պէյօղուի Հայոց գերեզմանոցը, եւ Յակոբ Կաթողիկոսի դամբանին քով թաղուեցաւ: Օծողն ու գերեզմանի կարգը կատարուին էր Էջմիածնի Նուիրակ քաջաքարող Յարութիւն Արքեպ. Բասենցի: Ներկայ էին Գրիգոր Պատրիարք, Սարգիս Արք. Սարաֆեան, բաղմութիւն յոյժ վարդապետաց, քահանայից, իշխանաց եւ ժողովուրդոց: Կարգը կատարուած ժամանակ ժողովուրդն այնպէս բռնած էր գերեզմանին շուրջը, որ Գրիգոր Պատրիարք ամբոխը հեռացընելու համար, հրամայեց Սարգիս Արքեպ.ին որ դամբանական մը խօսի: Սարգիս Արքեպ. Սարաֆեան քիչ մը հեռու բարձր գերեզմանաքարի մը վրայ ելաւ, եւ սկսաւ խօսիլ: Ահանատեսն Սարգիս դպիր